

ճանապարհ է (Հան. էջ 294), կամ ուրիշ բացատրու-
թեամբ՝ իսլամական գերեզմանատան ճանապարհէն
դէպի աջ քալելով՝ դարձեալ աջին հին հողմադացք
մը ունենալով՝ յետոյ իջնել Ուասի կը Մուսալլային,
որ կը նշանակէ ձոր խաչին, որուն խորը շինուած է
Ս. Խաչի վանքը, Տէյր էլ Մուսալլայէ անուշով:

Այս վրացական վանքին հիմնարկութիւնը կը վե-
րագրուի Վրացիներու քրիստոնեայ առաջին թագաւոր
Միրիանի (265–342), որ շինեց զայն վրացի վանա-
կաններու համար: Սամարացիները կործանեցին զայն
(521–531). իսկոյն վերաշինուեցաւ, ինչպէս Երուսա-
ղէմի շրջակայ միւս վանքերը՝ շնորհիւ Յուստինիա-
նոսի առատաձեռնութեան: Seawulf (1102) կը գրէ թէ
1099 ին Սարակիսոսները աւերեցին Խաչավանքը. ան
կ'աւելցնէ նաեւ թէ եկեղեցին թէև փնասուած էր բայց
ոչ քանդուած (Bar. gd. էջ 202):

ԺԱ. դարու վրացական թագաւորներէն կը հաս-
կըցուի թէ Խաչակիրներու ժամանակակից վրացի թա-
գաւորներ նորոգած են Խաչավանքը, Բագարատէն յե-
տոյ, որ Պրոխորոնի օգնեց նոյն նպատակին համար,
Դաւիթ Բ. (1089–1125), յետոյ Թամար թագուհին
(1184–1211), որ Երուսաղէմ զրկեց Ռուզթավէլի բա-
նաստեղծը ճոխ նուէրներով որոնք գործածուեցան Ս.
Խաչ եկեղեցին գեղեցկացնելու համար: 1643 ին ալ
Նիկոփոր վանահայրը Տատեան թագաւորին առատա-
ձեռնութեան շնորհիւ վերանորոգած է վանքը: Այն
նկարները որ այն ժամանակ շինուեցան, կը տեսնը-
ւին մինչեւ այսօր: 1685 ին Տոսիդէոս յոյն պատրի-
արքը (1669–1707) տիրացաւ վանքին: Գաթամոնի
վրացական վանքն ալ զոր 1177 ին հիմնարկեց Վրաց
թագաւոր Վախթանկ, ԺԶ. դարուն վրացիներ լքեցին